


Հաստատում եմ՝

Հայաստանի Հանրապետության

Գեղարքունիքի մարզպետ

 Գ. Սանոյան

12 մարտ 2020թ.

ՊԼԱՆ

Երկիր կորոնավիրուսային վարակի բերովի դեպքով/դեպքերով (COVID-19) պայմանավորված Գեղարքունիքի մարզում արտակարգ իրավիճակների արձագանքման

1. Ռիսկի գործոնով պայմանավորված՝ ձևավորել ՀՀ Գեղարքունիքի մարզի մասնագիտացված աշխատանքային թիմ: Կազմել գործողությունների պլան և ներկայացնել մարզպետի հաստատմանը (Ժամկետը՝ 12.03.2020թ., պատասխանատուներ՝ Վ. Ղուկասյան, Ս. Մանուկյան)
2. Իրազեկել և աջակցել մարզի համայնքների ղեկավարներին՝ համայնքային մասնագիտացված աշխատանքային թիմ և գործողությունների պլան մշակելու աշխատանքներին (Ժամկետը՝ 13.03.2020թ., պատասխանատու՝ Վ. Հարությունյան, Ա. Սաֆոյան)
3. Համայնքային թիմերին տրամադրել իրազեկման ուղեցույցներ և կազմակերպել սեմինարներ (Ժամկետը՝ 13.03.2020թ., պատասխանատու՝ Ա. Դվոյան)
4. Թիմերին անհրաժեշտ պաշտպանիչ միջոցներով ապահովելու համար խորհրդատվության և ֆինանսական միջոցների ապահովում (Ժամկետը՝ ամենօրյա, պատասխանատուներ՝ Կ. Զազյան, Ս. Դվոյան, Յու. Մուշեղյան)
5. Կորոնավիրուսային վարակի վտանգի հետ կապված ռիսկերի գույքագրում և կանխարգելում (Ժամկետը՝ 13.03.2020թ., պատասխանատու՝ Կ. Զազյան, Ս. Դվոյան, Վ. Հարությունյան, Ս. Մանուկյան)
6. Օպերատիվ տեղեկատվության ժամանակին փոխանակում բոլոր հնարավոր կապի միջոցներով կառավարության լիազոր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, բժշկական և կրթական հաստատությունների, համայնքի բնակչության և շահագրգիռ կողմերի միջև (Ժամկետը՝ ամենօրյա, պատասխանատուներ՝ Ս. Դվոյան, Յու. Մուշեղյան, Կ. Զազյան, Վ. Հարությունյան, Հասմիկ Շահբազյան)

7. Ապահովել սերտ և օպերատիվ համագործակցություն պետական, հասարակական, գործընկեր, միջազգային և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև (ժամկետը՝ ամենօրյա, պատասխանատուներ՝ Կ. Զազյան, Ս. Դվիյան, Յու. Մուշեղյան, Վ. Հարությունյան,)

8. Սոցիալական ցանցերով, հեռուստատեսությամբ, պաշտոնական լրատվությամբ և իրազեկման թերթիկներով բնակչության իրազեկվածության ապահովում (ժամկետը՝ 13.03.2020թ., ըստ անհրաժեշտության, պատասխանատուներ՝ Հասմիկ Շահբազյան, Ս. Դվիյան, Վ. Հարությունյան)

9. Կոնտակտավորների մեկուսացման համար համապատասխան հյուրանոցի և հանգստյան տան ընտրություն, նրանց նկատմամբ հսկողության իրականացում, սննդի, կենցաղային և կեցության հարցերի կազմակերպում (ժամկետը՝ 13.03.2020թ., պատասխանատու՝ Վ. Հարությունյան, Յու. Մուշեղյան, Ս. Դվիյան)

10. Իրազեկում ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածքում գտնվող և գործող բոլոր պետական, համայնքային, հասարակական և մասնավոր հաստատություններին կանխարգելիչ գործողությունների իրականացման համար (ժամկետը՝ 13.03.2020թ., ամենօրյա պատասխանատուներ՝ Ս. Դվիյան, Կ. Զազյան, Վ. Հարությունյան)

12. Տեղեկատվություն հավաքագրելու և փոխանակելու համար ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանում սահմանել հերթապահություն

13. Մարզպետարանում գործող թեժ գծի հեռախոսահամարի մասին տեղեկացում մարզի տարածքով՝ 060 650 623

ՀՀ Գեղարքունիքի մարզում կորոնավիրուսային վարակի վտանգի հետ կապված ռիսկերի կանխարգելման աշխատանքների ցանկ.

1. Մասսայական միջոցառումների չեղարկում (հնարավորության դեպքում)
2. Մարզում գործող բոլոր պետական հաստատությունների համար ախտահանիչ նյութերի և թերմոմետրերի ձեռքբերման աջակցում և պարտադիր օգտագործում
3. Թերմոֆիլտրերի կիրառման ապահովում մարզի բոլոր կրթական հաստատություններում
4. Անձնական հիգիենայի պահպանման վերաբերյալ իրազեկում, պետական և համայնքային հաստատություններում դրա կազմակերպման օժանդակում
5. Գրավոր տեղեկատվության ներկայացում ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան բոլոր ուսումնական և բժշկական հաստատություններից ըստ սահմանված ձևաչափի
6. Արտերկրից ժամանածների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, հաշվառում և կապի ապահովում
7. Գրիպի և մրսածության նախանշան ունեցող քաղաքացիների ընթացիկ հայտնաբերում և մեկուսացում